06/07/16-ից մինչև 15/07/19թ ամս/վճ 55000

660.000

Գործարքի կոդ: 613-20160706-37-702019

Գործարքի ծածկագիր: CQCBLZ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Քաղաք Եղեգնաձոր երկու հազար տասնվեց թվականի հուլիսի վեց

Մենք ՌՈԲԵՐՏ ԿԱՐԱՊԵՏԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ծնված՝ 29/09/1969թ., անձնագիր՝ AH0291330 տրված 037-ի կողմից 18/01/2007-ին, ՀԾՀ՝ 3909690068, հաշվառված՝ ՎԱՅՈՑ ՁՈՐ, ԵՂԵԳԻՍ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ Փ., 2Տ , այսուհետ « Վարձատու» մի կողմից, և արդարադատության գնդապետ՝ ԱՐՄԵՆ ԱԼԲԵՐՏԻ ԲԱՂԴԱԳՅՈՒԼՅԱՆ ծնված՝ 05/09/1965թ., անձնագիր՝ 007852684 տրված 010-ի կողմից 08/09/2015-ին, ՀԾՀ՝ 1509650296, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ՆՈՐ ՆՈՐՔ, ՇՈՊՐՈՆԻ 3 ՆՐԲ., 6 Շ, 40ԲՆ , որ հանդես է գալիս ՀՀ Արդարադատության Նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից 17.06.2016թ. տրված լիազորագրով, այսուհետ Վարձակալ մյուս կողմից, կնքեցինք սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Համաձայն սույն պայմանագրի, Վարձատուն պարտավորվում է վարձավճարի դիմաց Վարձակալին փոխանցել բնակելի տուն 126.5/ հարյուր քսանվեց ամբողջ հինգ տասնորդական/ քմ. մառան 23 / քսաներեք ամբողջ/քմ. ավտոտնակ 45.9 / քառասունհինգ ամբողջ ինը տասնորդական/ քմ. ավտոտնակ 21.3 / քսանմեկ ամբողջ երեք տասնորդական/ քմ. անասնաշենքից 20.7/ քսան ամբողջ յոթ տասնորդական/ քմ. թոնրատուն 18,4 / տասնութ ամբողջ չորս տասնորդական/ քմ. տնամերձ հողամաս 0.134 / զրո ամբողջ հարյուր երեսունչորս / հա. , որը գտնվում է Եղեգնաձոր քաղաքի Պողոսյան փողոցի 1-ին / առաջին/ նրբ. թիվ 5 / հինգ/ հասցեում:

1.2. Սույն պայմանագրի ժամկետները: Պայմանագիրը կնքվում է 3 / երեք/ տարի ժամկետով, պայմանագիրը սկսել է գործել սույն թվականի հունիսի 15-ից/ տասնհինգից/ :

1.3. Վարձավճարի չափը կազմում է ամսեկան 55000 / հիսունհինգ հազար / ՀՀ դրամ, ներառյալ հարկային վճարումները: Վարձակալը վարձավճարը փոխանցում է Վարձատուի 220022415610000 քարտային հաշվին

1.4. Վարձակալության օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին, ինչը հաստատվում է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղեգնաձորի տարածքային ստորաբաժանումից 17.11.2015թվականին տրված թիվ 17112015-10-0006 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով, ազատ է երրորդ անձանց իրավունքներից, չի գտնվում կալանքի և արգելանքի տակ, համաձայն անշարժ գույքի կադաստրի Վայոց Ձորի տարածքային ստորաբաժանումից 24.06.2016թ. տրված ՄՏ- 24062016-10-0095 միասնական տեղեկանքի;

1.5. Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, ինչպես նաև պայմանագրից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

1.6. Վարձակալության հանձնված Գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոխանցելու համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1.Վարձակալից պահանջել Գույքն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխան. վարձակալած օբյեկտի տարածքում պահպանել սանիտարական և հակահրդեհային նորմերը, կատարել մատակարարումների դիմաց վճարները.

2.1.2. Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը.

2.1.3. Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե Վարձակալը Գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան.

2.2 Վարձատուն պարտավորվում է ՛

2.2.1. Գույքը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում.

2.2.2. Գույքը Վարձակալին հանձնել դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով.

2.2.3. Վարձակալին նախազգուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին.

2.3. Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1. Պահանջել Վարձատուից սույն պայմանագրի 1.2. կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել Գույքը

2.3.2.Վարձատուից պահանջել իրեն տրամադրելու Գույքի պատկանելիքներն ու դրան վերաբերող փաստաթղթերը.

2.3.3.Գույքի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝

2.3.3.1. Վարձատուից պահանջել անհատույց վերացնելու Գույքի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը կամ հատուցելու Գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը:

2.3.3.2. Վարձատուին նախապես տեղեկացնելով՝ Վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերի գումարը, կամ պահանջել վաղակետ լուծելու պայմանագիրը:

.3. Վարձակալը իրավունք չ ունի վարձակալած գույքը հանձնելու ենթավարձակալության:

.Վարձակալը պարտավոր է՝

..4.1.ժամանակին մուծել Գույքն օգտագործելու համար սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված վարձավճարը

2.4.2. Գույքը պահպանել պատշաճ վիճակում, պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Գույքն իր կողմից ստացված վիճակում՝ հաշվի առնելով դրա բնական մաշվածությունը:

3. ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ԳՈՒՅՔԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐ

3.1 Վարձակալած Գույքից Վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

3.2.Վարձակալի կողմից առանց Վարձատուի համաձայնության կատարած վարձակալած Գույքից անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:

3.3.Վարձակալած Գույքի ամորտիզացիոն միջոցների հաշվին կատարած, ինչպես բաժանելի, այնպես էլ անբաժանելի բարելավումները համարվում են Վարձատուի սեփականությունը:

4. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է առաջին ատյանի դատարանի քննությանը:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Իր պարտականությունները պատշաճ կերպով կատարող Վարձակալը, սույն պայմանագրի ժամկետի լրանալուց հետո / ենթակետ1.2/,այլ հավասար պայմանների դեպքում ունի նոր ժամկետով պայմանագիր կնքելու նախապատվության իրավունք; Վարձակալը պարտավոր է գրավոր ձևով, երեսուն օր առաջ, ծանուցել վարձատուին այդպիսի պայմանագիր կնքելու ցանկության մասին:

5.2 Վարձատուի կողմից վաղաժամկետ պայմանագիրը լուծելու դեպքում, նա պարտավորվում է վերադարձնել վարձակալի կատարած ծառայությունների արժեքի ամբողջ գումարը:

5.3. Սույն պայմանագրում կատարած փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

5.4. Վարձատուն և Վարձակալը պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում պարտավորվում են երկու ամիս առաջ միմյանց տեղյակ պահել:

5.5. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, կողմերի պահանջով չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվեց մեկական օրինակ, մեկը մնում է Նոտարական գրասենյակում, մյուսը ենթակա է գրանցման եղեգնաձորի անշարժ գույքի կադաստրում երեսուն օրվա ընթացքում:

Վարձատու--------------------------------------------------

ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայություն

Ք. Երևան Հալաբյան 41ա, ՀՎՀՀ 01223338

Հ/Հ 900013288023, թիվ 1 գանձապետարան

ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժ/պ Ա.Ռ. Հարությունյան

Լիազորված անձ--------------------------------------------------

Հայաստանի Հանրապետության անունից, երկու հազար տասնվեց թվականի հուլիսի վեց , սույն պայմանագիրը վավերացված է իմ եղեգնաձոր Նոտարական տարածքի նոտարական գրասենյակի նոտար ՍՈՆՅԱ ՓԱՅԼԱԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:

Պայմանագիրն ստորագրած անձանց ինքնությունը, նրանց իրավունակությունը, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ ՌՈԲԵՐՏ ԿԱՐԱՊԵՏԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ իրավունքները ստուգված են:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 611 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կադաստրի համապատասխան ստորաբաժանումում:

Գրանցված է սեղանամատյանում---953---ով:

Գանձված է պետական տուրք 1000 դրամ և ծառայության վճար 8000 դրամ համաձայն ՀՀ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

Նոտար Սոնյա Փայլակի Պողոսյան